# The Gospel as Jesus' Apostles Would Teach Today

***Սկիզբէն*** *Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց:*
*Աստուած՝ իր պատկերովը ստեղծեց մարդը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց զանիկա, արու եւ էգ ստեղծեց զանոնք:* (ԾՆՆԴՈՑ Ա.1, 27)

*Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը Աստուած էր:*
*Անիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր:*
*Ամեն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ:*
*Նորանով էր կեանքը, եւ կեանքը մարդկանց լոյսն էր:*
(ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ Ա:1-4)

*Եւ մինչդեռ նա մտածում էր այս , ահա Տիրոջ հրեշտակը երազում երեւեցաւ նորան եւ ասեց. Յովսէփ՝ Դաւիթի որդի, մի վախենար մօտ առնել քո կին Մարիամին, որովհետեւ նորանում ծնուածը Սուրբ Հոգիից է:*

*Եւ նա որդի կը ծնի, եւ նորա անունը Յիսուս դնես. որովհետեւ նա իր ժողովրդին կ'փրկէ իրանց մեղքերից:* (ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ Ա:20,21)

*Որովհետեւ ամենքը մեղանչեցին, եւ Աստուծոյ փառքից պակասուած են.*
(ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ Գ:23)

*Որովհետեւ մեղքի վարձքը մահն է. բայց Աստուծոյ շնորհքը՝ յաւիտենական կեանք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը:*
(ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ Զ:23)

*Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չ'կորչի, այլ յաւիտենական կեանքն ունենայ:*
*Որովհետեւ Աստուած իր Որդին չ'ուղարկեց աշխարհքը, որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը նորանով փրկուի:*

*Նորան հաւատացողը չի դատապարտուիլ. իսկ չ'հաւատացողն արդէն դատապարտուած է. որովհետեւ չ'հաւատաց Աստուծոյ միածին Որդու անունին:*
*Եւ սա է դատաստանը, որ լոյսն եկաւ աշխարհքը, եւ մարդիկ խաւարն աւելի սիրեցին քան թէ լոյսը, որովհետեւ նորանց գործերը չար էին:*
(ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ Գ:16-19)

*Տէրը չի ուշացնիլ խոստումը, ինչպէս ոմանք ուշացնել են կարծում, բայց երկայնամիտ լինում մեզ վերայ, որովհետեւ չէ կամենում որ կորչողներ լինեն, եայց որ ամենն ապաշխարութեան հասնեն:* Բ ՊԵՏՐՈՍ ԳԼ.Բ

*Մենք ամենքս ոչխարների պէս մոլորուեցանք, իւրաքանչիւրն իր ճանապարհին դառաւ. եւ Տէրը նորա վերայ դրաւ մեր ամենի մեղքը:*
ԳԼ.ԾԳ.6 (Եսայիայի 53.6)

*Հիմա թող ստոյգ գիտենայ Իսրայէլի բոլոր տունը, որ "Աստուած նորան Տէր եւ Օծեալ արաւ, սոյն այս Յիսուսին, որին դուք խաչեցիք:*

*Եւ երբոր այս լսեցին, սրտերումը զղջացին. եւ ասեցին Պետրոսին եւ միւս առաքեալներին, Ի՞նչ անենք, մարդիկ եղբարք:*

*Պետրոսն էլ նորանց ասեց . Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից ամեն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողութեան համար, եւ Սուրբ Հոգու պարգեւը կ'ընդունիք:*

*Որովհետեւ ձեզ եւ ձեր որդկանց համար է այս խոստմունքը, եւ այն ամեն հեռաւորների համար, որոնց մեր Տէր Աստուածը կ'կանչէ:*
(ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՑ ԳԼՈՒԽ. Բ:36-39)

*Եւ էլ մի ուրիշ ոչ մէկով փրկութիւն չ'կայ - որովհետեւ ուրիշ անուն էլ չ'կայ երկնքի ներքեւ մարդկանց տրուած, որով կարելի լինի մեզ փրկուիլ:*
(ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՑ Դ:12)

*Ախ հիմա ի՞նչ պիտի ըսենք. մեղքի մէջ մնա՞նք արդեօք, որպէս զի շնորհքը շատնայ:*
*Քա'ւ լիցի - մենք որ մեղքին մեռանք, ի՞նչպէս անոր մէջ կենանք:*
*Չէ՞ք գիտեր թէ մենք որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք, անոր մահուանը մկրտուեցանք:*

*Անոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար. որպէս զի ինչպէս Քրիստոս Հօրը փառքովը յարութիւն առաւ մեռելներէն, այնպէս ալ մենք կեանքի նորոգութեան մէջ պտըտինք:* (*ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ Զ*:1-4)

*Վասնզի ամենքդ՝ որ Քրիստոսումը մկրտուեցաք, Քրիստոսին հագած էք:*
(ԹՈՒՂԹ ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ Գ:27)

*Ուրեմն եթէ մէկը Քրիստոսին մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է: Հիները անցան եւ ահա ամէն բան նոր եղաւ:* ( Բ ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ Ե:17)